«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	«ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ»
Առարկա	Դասվար
Ուսուցիչ	Ժաննա Երիցյան
Մարզ	Երևան
Ուսումնական հաստատություն՝	«Մ. Մելքոնյանի անվան N 11 հիմն. դպրոց» ՊՈԱԿ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ԳԼՈՒԽ 1. ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

1.1 Ներառական կրթության տեսամեթոդական հիմքերը.....5

1.2 ԱՈՒՊ- ի դերը կրտսեր դպրոցում.....10

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

2.1 Կրտսեր դպրոցի ուսուցիչների շրջանում ներառական կրթությանը վերաբերող իրականացված սոցիոլոգիական հարցումներ: Արդյունքների վերլուծություն և ամփոփում.....16

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....22

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.....23

ՀԱՎԵԼՎԱԾ.....24

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներառական կրթությունը կրթական այնպիսի ծրագիր է, որը բացառում է ամեն

տեսակ խտրականություն երեխաների նկատմամբ, ապահովում է հավասար վերաբերմունք բոլորի հանդեպ, կրթական համակարգում ստեղծում է ուրույն պայմաններ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող /ԿԱՊԿՈՒ/ անձանց համար: Ներառական կրթության նպատակը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց համար իրենց ընդունակություններին, կարողություններին, առողջությանը համարժեք ուսումնական միջավայր ապահովելն է, նրանց հասարակական հարմարեցման, ինքնասպասարկման ունակությունների ձեռքբերման, աշխատանքային, մասնագիտական գործունեության և ընտանեկան կյանքին պատրաստվածության համար հնարավերություններ ստեղծելը:

«Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող /ԿԱՊԿՈՒ/ անձանց կրթության մասին» ՀՀ օրենքն ընդունվել է 2005 թվականին: Այն ենթադրում է կրթության մատչելիություն բոլորի համար, երեխաների ամենատարբեր կարիքների բավարարմանն ուղղված բոլոր տեսակի միջոցների ապահովում, ինչը հանրակրթական դպրոց մտնելու այցեքարտ է ընձեռնում հատուկ կարիքներ ունեցող երեխաներին: Ներառական կրթությունը ձգտում է հասնել ուսուցման նկատմամբ առավել ճկուն մոտեցման՝ բավարարելու մարդկանց զանազան կրթական պահանջները:

Այս համատեքստում արդիական է դառնում նաև ներառականության անցնցում ինտեգրման, դրա նկատմամբ հանդուրժողականության, հավասարակշռված վերաբերմունքի դրսևորման կարևորումը՝ որպես բարոյական դաստիարակության բաղասրամաս, մարդասիրության դրսևորում: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ներառումը հանրակրթական դպրոցներ կստիպի ուսուցիչներին ևս ընդառաջ գնալ ԿԱՊԿՈՒ աշակերտների անհատական կարիքների բավարարմանը, մշակել նոր՝ դեպի երեխան կողմնորոշված ուսուցման և ուսումնառության մեթոդներ, ապահովել մեծ թվով մասնակիցների ընդգրկվածություն ուսումնական գործընթացում, իսկ սովորողներն էլ ժամանակի ընթացքում կկարողանան ընդունել ու հարմարվել, որ հանրակրթական դասարանում ոչ բոլոր աշակերտներն են միանման, կդրսևորեն բարձր սոցիալական

պատասխանատվություն, հոգատարություն, հանդուրժողականություն ու մարդասիրություն:

Խնդիրն առավել զգայուն է հատկապես կրտսեր դպրոցում՝ պայմանավորված աշակերտների տարիքային առանձնահատկություններով, վարքային դրսևորումներով: Հենց այս համատեքստում է, որ մեծագույն պատասխանատվություն է դրված բոլոր մանկավարժական աշխատողների վրա՝ ապահովելու համակեցության, հանդուրժողականության, համագործակցության որակներով օժտված, մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները հարգող, մարդասեր, քաղաքակիրթ, բարոյամշակութային արժեք ունեցող անձի ձևավորման համար աջակցող կրթական միջավայր: Հենց այս հիմնախնդրի հրատապությամբ էլ պայմանավերել ենք սույն հետազոտական աշխատանքի թեմայի **արդիականությունը:**

Հետազոտության նպատակը: Մեր նպատակն է ուսումնասիրել ներառական կրթության տեղայնացումը հանրակրթական դպրոցի կրտսեր օղակում, ինչպես նաև՝ ուսուցչի կողմից կիրառվող մանկավարժահոգեբանական այն նմոտեցումները, որոնք կարող են նպաստել ԿԱՊԿՈՒ սովորողների կրթական կարիքների բացահայտմանը, բավարարմանը, վերջիններիս համար հանրակրթական դասարանում աջակցող ու առողջ բարոյահոգեբանական միջավայրի ապահովմանը:

Հետազոտության խնդիրը:

- Ուսումնասիրել ներառական կրթության տեսական հիմքերը, ՀՀ հանրակրթական համակարգում ներդրման շարժառիթները, ներկայիս վիճակն ու հնարավոր դժվարությունները:
- Դիտարկել տարրական դասարանների աշակերտների վերաբերմունքի առանձնահատկություններն իրենց ԿԱՊԿՈՒ դասընկերների նկատմամբ:
- Ցույց տալ ԱՈՒՊ-ի նշանակությունը ԿԱՊԿՈՒ սովորողների սոցիալականացման, կրթական կարիքների բացահայտման, բավարարման, ինչպես նաև հանրակրթական դասարանում անցնցում կրթություն ստանալու տեսանկյունից:
- Իրականացնել սոցիոլոգիական հարցում՝ պարզելու սովորողների վերաբերմունքի առանձնահատկությունները ԿԱՊԿ ունեցող դասընկերների նկատմամբ:

ԳԼՈՒԽ 1
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

1.1 Ներառական կրթության տեսամեթոդական հիմքերը

Ներառական կրթության համակարգը կրթական հարմար պայմաններ է ենթադրում՝ ապահովելու հաշմանդամություն, առանձնահատուկ կարիքներ ունեցող անձանց կրթական կարիքները: Մարդկության զարգացման տարբեր փուլերում նմանօրինակ միարդիկ ոչ միշտ են հնարավորություն ունեցել՝ հավասար պայմաններում իրենց կրթության իրավունքն իրացնելու: Այսօր, սակայն, աշխարհում մեծ տարածում է գտել առանձնահատուկ կարիքներով անձանց սոցիալական ներառման գաղափարը: «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի 7-րդ հոդվածը սահմանում է. «Մասնակից պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու համար հաշմանդամություն ուեցող երեխաների՝ մարդու իրավունքներից և հիմնարար ազատություններից մյուս երեխաների հետ հավասար հիմունքներով օգտվելը[1]»: ՀՀ-ի կրթության բնագավառում օրենսդրության խնդիրներից է Հայաստանի Հանրապետության քաղաքացիների՝ Սահմանադրությամբ ամրագրված կրթության իրավունքի ապահովումը և պաշտպանությունը[2]»: Համաձայն «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի՝ «Ներառական կրթությունը՝ յուրաքանչյուր երեխայի համար, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան, անհրաժեշտ պայմանների և հարմարեցված միջավայրի ապահովման միջոցով կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և հանրակրթության պետական չափորոշիչով սահմանված արդյունքի ապահովումն է[3]»:

Այսպիսով, ընդառաջ գնալով ժողովրդավարության, մարդասիրության սկզբունքներին, մարդու հիմնարար իրավունքներն ու ազատություններն անվերապահորեն իրացնելու գաղափարին՝ ՀՀ Ազգային ժողովը 2014 թվականի դեկտեմբերի 1-ին ընդունել է «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը, համաձայն որի՝ հանրակրթության համակարգում անցում է կատարվել համընդհանուր

[1] «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիա, հոդված 7:
[2] «Կրթության մասին» ՀՀ օրենք,հոդված 2:
[3] «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք:

ներառական կրթության[4]: Ներառական կրթությունը ենթադրում է, որ աշակերտներն իրենց ողջ բազմազանությամբ ու յուրատեսակությամբ սովորում են կողք-կողքի, նույն դպրոցում և դասարանում: Սոցիալական և կրթական հմտությունների զարգացման բազմաթիվ խնդրահարույց հարցեր ու մարտահրավերներ են առկա՝ ոչ բավարար չափով մասնագետներ, դպրոցների սոցիալական ու ֆիզիկական միջավայրի հարմարեցման հիմնախնդիրներ, ինչպես նաև ծնողների ոչ իրատեսական ակնկալիքներ, մոտեցումներ և պատկերացումներ, սրանք հարցեր են, որ պահանջում են արագացված լուծումներ, որպեսզի բնականոն կերպով իրացվի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության ու դաստիարակության գործառույթը հանրակրթական դպրոցում:

Նկատենք, որ ՀՀ կրթական համակարգը դեռ ինտեգրման փուլում է, քանի որ ոչ բոլոր դպրոցները կամ մանկավարժներն ունեն ներաառական կրթություն տալու հնարավորություն կամ համապատասխան փորձ ու հմտություններ: Կրթության այս ձևի արդյունավետ ներդնելու համար անհրաժեշտ է, որ քաղաքականություն մշակողները, համալսարանները, դպրոցները, հասարակական կազմակերպությունները, ծնողները և այլ մասնակիցները ներգրավվեն գործընթացի մեջ: Մի շարք երկրներում նմանօրինակ խնդիրներով երեխաների համար կան հարմարեցված դասասենյակներ: ՀՀ-ում պատկերն այլ է. առանձնահատուկ դասասենյակային հարմարեցվածությամբ ոչ բոլոր դպրոցներն են աչքի ընկնում, ուստի կարելի է պնդել որ սահմանափակ կարիքներ ունեցող երեխաների կրթության հարցը հանրակրթական դպրոցներում ունի բազմաթիվ վերանայման խնդիրներ՝ շենքային պայմաններից ու համապատասխան գույքից, մինչև համապատասխան մանկավարժական աշխատողների բացակայություն:

Հիմնահարցն ունի նաև բարոյահոգեբանական դիտանկյուն: Մինչ վերջին ժամանակներս Հայաստանի ավանդական կրթական համակարգում այս կամ այն առանձնահատուկ կարիք ունեցող երեխաները ստանում էին կրթություն միայն հատուկ կրթական հաստատություններում, տանը կամ տուն ինտերնատներում, սակայն վերջերս Հայաստանում տեղի ունեցան զգալի փոփոխություններ. փոխվեց հասարակության վերաբերմունքը հատուկ կարգավիճակ և պայմանների կարիք ունեցող երեխաների նկատմամբ: Այժմ ավելի շատ է գիտակցվում, որ հոգեֆիզիկական խանգարումները չեն բացառում մարդկային էությունը (զգալու, անհանգստանալու կարողությունները), ինչպես նաև հասարակական փորձի յուրացումը: Ներառական կրթությունը բավականին դրական է ազդում դրա

[4] https://www.arlis.am/documentview.aspx?docid=94683 «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը:

շահառուի՝ սահմանափակ կարողություններով երեխաների սոցիալականացման վրա: Փաստացի դրանից շահում են երեխան, ընտանիքը, պետությունը և հասարակությունը: Կրթության կազմակերպման նման գործընթացի հիմքում բոլոր երեխաների, այդ թվում նաև հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցողների կրթություն ստանալու իրավունքի իրացումն է: Այն բավարարում է սովորողների բազմազան կարիքները, մեծացնում է նրանց մասնակցությունը ուսումնական, մշակութային և համայնքային կյանքին և նվազեցնում է կրթությունից նրանց դուրս մնալու հավանականությունը: Սակայն ակնհայտ է, որ նման խնդիրներով երեխաների սոցիալականացումը, հասակակիցների հետ շփումը բավականին երկար ու բարդ գործընթաց է: Ոչ միշտ է հասարակությունը գրկաբաց ընդունում հատուկ կարիքներով երեխաներին, իսկ մանկավարժները ոչ միշտ են հմուտ գործում: Ուստի և հատուկ կարիքներով երեխան սկզբնական շրջանում դժվար է ազատվում իր բարդույթներից: Կան նաև հակառակ իրավիճակներ, երբ հատուկ կարիքներով երեխան բավականին անցնցում է սոցիալականացվում՝ դառնալով դասարանի լիիրավ անդամ: Այստեղ կարևոր է այն միջավայրը, որտեղ հայտնվում է հատուկ կարիք ունեցող երեխան: Եթե վերջինիս համար ստեղծվում է բարոյահոգեբանական առողջ մթնոլորտ, նրան ընդունում են իր բոլոր տարբերություններով ու առավելություններով, ապա նա կարողանում է շատ արագ ինքնադրսևորվել՝ հաղթահարելով հնարավոր հոգեբանական պատնեշները:

ԿԱՊԿՈՒ երեխայի համար աջակցող միջավայրի ապահովման համատեքստում մեծ է ուսուցչի դերակատարումը: Վերջինս ԿԱՊԿ ունեցող աշակերտների հետ ներգրավվում է տարաբնույթ շփումների, մանկավարժական աշխատանքների մեջ, ինչի շնորհիվ էլ ճանաչում է յուրաքանչյուրին անհատապես: Բացի այդ, մանկավարժները դպրոցից դուրս ներգրավված են ավելի լայն սոցիալական շփումների, որոնց թվին են պատկանում սոցիալական աջակցության ռեսուրսները և ծնողների հետ շփումը: Ուստի և կարևոր է, որ մանկավարժը լավ գիտակցի հատուկ կարիքներով երեխաների պահանջմունքները ու կարողանա հավասարակշռել վերջիններիս հոգեբանական հնարավոր բարդույթները: Անչափ կարևոր է, որ ԿԱՊԿՈՒ սովորողը լավ ընդունվի դասընկերների կողմից, բարեկամանա նրանց հետ: Շատ դեպքերում սովորողները դժվար են ընդունում իրենցից որոշակիորեն տարբեր այլ սովորողների հետ նույն դասարանում սովորելու հանգամանքը: Այս պարագայում բացառված չեն կոնֆլիկտային իրավիճակներն ու անհարմարությունները: Սակայն հարկ է նկատել, որ մանկավարժահոգեբանական բացատրական աշխատանքները, օրինակներով ուսուցումը, խաղերը, զբոսանքներն

ու մտերմիկ իրավիճակների հաճախակի ստեղծումը մեծապես կարող են նպաստել լարված իրավիճակի շտկմանը: Այսինքն՝ որքան հեշտ ստացվի ինտեգրումը, այդքան կշահեն բոլոր սովորողները, դասարանը զերծ կմնա ավելորդ լարվածությունից:

Ի վերջո, կրթական գործընթացի մասնակիցները, այդ թվում նաև սովորողների ծնողները, որոնք նույնպես հնարավոր է որոշակի անհարմարություններ զգան ԿԱՊԿՈՒ սովորողների առկայության պարագայում, պետք է քաջ գիտակցեն, որ օրենքի առաջ բոլորն են հավասար, մասնավորապես. «Հանրակրթության բնագավառում պետությունը երաշխավորում է հանրակրթության մարդասիրական բնույթը, ազգային և համամարդկային արժեքների, մարդու կյանքի ու առողջության, անհատի ազատ և համակողմանի զարգացման առաջնայնությունը, քաղաքացիական գիտակցության կարևորումը, անհատի և նրա իրավունքների ու ազատությունների նկատմամբ հարգանքը, արժանապատվությունը, հայրենասիրությունը, աշխատասիրությունը, պատասխանատվությունը, հանդուրժողականությունը, հանրակրթության հավասար հնարավորությունները»[5]: Բացի դա, յուրաքանչյուր ծնող ինքը նույնպես պետք է շահագրգիռ լինի, որ իր երեխան լինի հադուրժող, ընկերասեր, մարդասեր, փորձի օգնել իր ընկերներին:

Կարծում ենք սույն հիմնախնդիրն ունի բազմաթիվ կնճռոտ անկյուններ, այդուհանդերձ, վստահ ենք, որ միասնական աշխատանքի, հանդուրժողականության ու միմյանց իրավունքներն ու շահերը հաշվի առնելով է հնարավոր միայն, որ հասարակությունը հաշվի նստի ԿԱՊԿՈՒ անձանց թե՛ իրավունքների, թե՛ պահանջմունքների հետ՝ չմոռանալով վերջիններիս նկատմամբ լինել հանդուրժող, բարեվարք, օգնելու և օժանդակելու պատրաստակամ: Հաշմանդամություն ունեցող երեխաները ունեն նույն խմբին պատկանելու իրավունք: Ներառական կրթությունը ենթադրում է համակարգի, այլ ոչ թե երեխայի հարմրեցում: Ներառական կրթությունը օգնում է հաղթահարելու խտրականությունը[6]:

Եվ որպեսզի արդեն հասուն տարիքում մարդն իր մեջ կրի այդպիսի արժեքներ, անչափ կարևոր է, որ հենց կրտսեր դպրոցական տարիքում առանձնակի ուշադրություն դարձվի բարոյական դաստիարակությանը, բարձր արժեքային համակարգին:

Այսպիսով, վերահաստատենք մեր պնդումն առ այն, որ հատուկ կարիքներով երեխաների կրթության ու դաստիարակության արդյունավետ իրականացման համատեքստում կարևոր բաղադրիչներ են բարոյահոգեբանական առողջ

[5] «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք հոդված 5, կետ 2.1:
[6] «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ՀՀ օրենք:

մթնոլորտը, հանդուրժողականությունն ու մարդասիրությունը: Սա հենց բարոյական դաստիարակության հենասյուներն են ու առանցքային կարևոր են հատկապես կրտսեր դպրոցահասակների պարագայում: Դպրոցում երեխաներին միմյանցից առանձնացնելու օրինական հիմքեր չկան: Երեխաները պետք է սովորեն միասին, դրանում կշահեն նաև այն երեխաները, որոնք խնդիրներ չունեն և պետք է գործուն լինի այն սկզբունքը, որ նրանց միմյանցից պաշտպանելու անհրաժեշտություն չկա: Միայն ներառական մոտեցումն է կարող նվազեցնել վախը և նպաստել հարգանքի, փոխօգնության, փոխըմբռման հաստատմանը[7]:

Ի վերջո, մարդիկ տարբեր են, տարբեր են նաև նրանց կարիքներն ու պահանջմունքները, սակայն բոլորն էլ ունեն հավասար իրավունքներ, որոցից է նաև կրթվելու, սոցիալապես ձևավորվելու իրավունքը:

[7] Բաց Ֆայլ Ներառական կրթության մասին. Օժանդակ նյութեր մենեջերների և ադմինիստրատորների համար, ՅՈՒՆԵՍԿՕ-2004թ. էջ 82:

1.2 ԱՈՒՊ- ի դերը կրտսեր դպրոցում

Անհատական ուսուցման պլանի մշակումը ներառական համարվող սովորողների համար ավելի որակյալ դասավանդում, ուսումնառություն և արդյունք ապահովելու ամենակարևոր գործոններից մեկն է:

Այն հաստատված ձևաչափին համապատասխան գրավոր մշակվող թիմային պլանավորում է, որը կառուցվում է սովորողի կարիքների, ուժեղ կողմերի ու հետաքրքրությունների և հանրակրթության պետական չափորոշիչների և ծրագրերի հիման վրա՝ հանդիսանալով կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի կրթության հիմքը: ԱՈՒՊ-ը մշակվում է այն սովորողների համար, ովքեր ունեն դժվարություններ կրթության մեջ և սահմանված կարգով գնահատվել ու ճանաչվել են որպես կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող: Նրանք չեն կարողանում յուրացնել հանրակրթական ուսումնական ծրագրերը առանց համապատասխան ծրագրային կամ միջավայրային հարմարեցումների: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի պատճառները հետևյալ խանգարումներն են.

- **Ձայնի և խոսքի**
- **Տեսողության**
- **Լսողության**
- **Ինտելեկտուալ (մտավոր)**
- **Շարժողական**

«Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձ է համարվում ուսուցման հետ կապված դժվարություններ, այդ թվում՝զարգացման ֆիզիկական կամ մտավոր առանձնահատկություններ ունեցող անձ, որի կողմից հանրակրթական հիմնական ծրագրերը յուրացվելու համար անհրաժեշտ են կրթության առանձնահատուկ պայմաններ»[8]: ԱՈՒՊ-ում նախանշված կրթական ծառայությունները մատուցվում են սովորական դասարաններում՝ դասերի ժամանակ ուսուցիչների կողմից, իսկ մասնագիտական ծառայությունները՝ ռեսուրս սենյակներում մանկավարժահոգեբանական աջակցության թիմի կողմից: Այլ դեպքերում ԱՈՒՊ-ով նախատեսված մասնագիտական ծառայությունները ծնողի համաձայնությամբ կարող են մատուցվել նաև տարածքային մանկավարժահոգեբանական կենտրոններում՝ կախված սովորողների կարիքներից կամ դպրոցի ռեսուրսներից: Որոշ սովորողներ կարող են ունենալ ԱՈՒՊ միայն մեկ

[8] «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք,հոդված 3, 10.2:

առարկայի համար, իսկ մյուսները, բացի մասնագիտական ծառայություններից, կարող են ունենալ ԱՈւՊ ակադեմիական բոլոր առարկաների համար: Կարող են լինել նաև սովորողներ, որոնց համար ԱՈւՊ-ում որևէ առարկայական ծրագիր չի հարմարեցվի (ֆիզիկական դժվարություններ կամ միջավայրային հարմարեցումների կարիք ունեցող սովորողներ), քանի որ սովորողը հաջողությամբ յուրացնում է իր դասարանի բոլոր առարկայական ծրագրերը՝ առանց որևէ ծրագրային, բովանդակային հարմարեցումների, սակայն այս սովորողների ԱՈւՊ-ներում կպլանավորվեն և կնախանշվեն անհրաժեշտ միջավայրային հարմարեցումները:

Սովորողների ԱՈւՊ-ը կազմակերպվում է դիտարկման և գնահատման արդյունքների հիման վրա: ԱՈւՊ-ը կազմում է հետևյալ բազմամասնագիտական խումբը.

- **ուսուցիչ,**
- **հատուկ մանկավարժ,**
- **սոցիալական աշխատող,**
- **ծնող,**
- **այլ մասնագետներ (հոգեբան, սուրդոմանկավարժ և այլն):**

«Բազմամասնագիտական թիմը բազմաթիվ ոլորտներ ներկայացնող մասնագետներից և երեխայի ընտանիքի անդամներից բաղկացած խումբ է, որը հետապնդում է մեկ ընդհանուր նպատակ՝ ապահովել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի հաջողությունը հանրակրթական դասարանում[9]»:

ԱՈւՊ-ը կրթական գործընթացի պլանավորումն է: Այն պետք է ունենա հստակ ձևակերպված վերջնանպատակ, տարեկան նպատակ, կարճաժամկետ խնդիրներ (վերջնանպատակին և տարեկան նպատակին հասնելու համար) և տարեկան ծրագիր: ԱՈւՊ-ում անպայման պետք է նշվի, թե ո՞ր ծրագրերից է օգտվել խումբը նպատակները և կարճաժամկետ խնդիրները ձևակերպելու համար: ԱՈւՊ-ները կազմվում են պետության կողմից հաստատված հատուկ կրթության առարկայական չափորոշիչներով և ծրագրերով, որոնք առանձնացված են ըստ թեթև, չափավոր, ծանր մտավոր հետամնացության: ԱՈւՊ-ը գրվում է որոշակի ժամանակահատվածի համար: Այն կազմող թիմը պետք է հավաքվի 6, իսկ անհրաժեշտության դեպքում 3 ամիսը մեկ անգամ, որպեսզի վերանայի նպատակներն ու խնդիրները, քննարկի երեխայի ուսումնական առաջընթացը: Երեխայի մեծանալու հետ փոփոխվում են նրա ուսումնական կարիքները: ԱՈւՊ -ը պետք է փոխվի ըստ անհրաժեշտության:

[9] «Ներառական կրթության ռազմավարություն», դասագիրք, Երկրորդ հրատարակություն, Երևան, Ասողիկ, 2020:

Դասավանդող ուսուցիչը ԱՈՒՊ-ի մշակման թիմի կարևոր և պարտադիր անդամն է հանդիսանում: Բազմամասնագիտական թիմում ուսուցչի պարտականությունն է՝

- **դպրոցի և ընտանիքի կապի պահպանում,**
- **մասնակցություն անհատական ուսումնական պլանի մշակմանը,**
- **առաջնային գնահատում[10]:**

ԱՈՒՊ-ի իրականացման ընթացքում ծնողը հանդիսանում է ոչ միայն իր երեխայի շահերի լավագույն պաշտպանը, այլև կարևոր դերակատարում ունի դպրոցում սովորած գիտելիքների և հմտությունների գործնական կիրառման, ամրապնդման, ընդհանրացման և պահպանման հարցում՝ շարունակելով այդ աշխատանքները նաև տանը: Այդ աշխատանքը կարևոր է, որ ամեն ինչ սահուն և արդյունավետ ընթանա սովորողի համար ԱՈՒՊ-ի մշակումից հետո և ամբողջ ուսումնական տարվա ընթացքում: Այս պարագայում շատ կարևոր է, որ սովորողի ծնողն իրազեկ լինի օրենքով սահմանված իր իրավունքներին. «Սովորողի ծնողն իրավունք ունի դիմելու համապատասխան մարմիններին երեխայի զարգացման, ուսուցման և դաստիարակության հարցերով, պաշտպանելու իր և իր երեխայի օրինական շահերը համապատասխան մարմիններում, մասնակցելու հանրակրթական ծրագրերի իրականացման և դրանց արդյունավետության գնահատման գործընթացին[11]»: Առհասարակ, ներառական կրթությունը հաշմանդամության սոցիալական մոդելի յուրօրինակ ածանցյալն է: Այն ընդունում է, որ բոլոր երեխաները տարբեր են, իսկ դպրոցներն ու հանրակրթական համակարգը պետք է հարմարվեն բոլոր սովորողների մտավոր, հոգեկան և ֆիզիկական զարգացման կարիքներին և անհատական պահանջմունքներին: Սակայն ներառում չի նշանակում բոլորին ձուլելու կամ միատեսակ դարձնելու ձգտում: Այն ընդունում է, որ երեխաները սովորում են տարբեր արագությամբ, իսկ ուսուցիչներին անհրաժեշտ են հատուկ հմտություններ՝ ուսուցման գործընթացի ճկունությունն ապահովելու համար: Պարզապես երեխաներին անհրաժեշտ է հասկանալի, մատչելի դասավանդում: Իսկ դա իր հերթին ենթադրում է երեխայի առանձնահատկություններին, անհատական կրթական պահանջմունքներին, զարգացման տեմպերին, ընդունակություններին և կարողություններին համապատասխանող տարբեր մեթոդների օգտագործում: Շատ կարևոր է, որ ուսումնական ծրագրերը լինեն բավարար չափով ճկուն, և ուսուցիչներին տրվի դրանք երեխաների անհատական կարիքներին համապատասխանեցնելու, լուծումներ գտնելու հնարավորություն, որպեսզի

[10] Ներառական կրթության ռազմավարություն», դասագիրք, Երկրորդ հրատարակություն, Երևան, Ասողիկ, 2020:
[11] «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք,հոդված 28, 3.4.5:

յուրաքանչյուր երեխա ստանա իր կարիքներին և կարողություններին համապատասխան կրթություն: Ուսուցումը պետք է խթանի և ոչ թե խոչընդոտի երեխայի զարգացումը: Դպրոցներին պետք է աջակցություն ցուցաբերվի որոշակի առարկաների կամ ուսուցման մեթոդների փոփոխության հարցում և այդ աջակցությունը պետք է զուգորդվի համապատասխան հմտությունների զարգացման հետ: Հատուկ ուշադրություն պետք է դարձվի այդ կարիքների բավարարման համար անհրաժեշտ ռեսուրսների ապահովմանը:

Անհատական ուսումնական պլանի կազմման հարցում առանցքային է դասավանդող ուսուցչի դերակատարումը: Ուսուցչի ներգրավվածությունը պետք է սկսվի սովորողի համար իրատեսական և նպատակահարմար անհատական ծրագրի վերաբերյալ որոշումների կայացումից և շարունակվի ԱՈւՊ-ի մշակման և դրա իրականացման փուլերում: Ուսուցչի մասնակցությամբ մշակվող ԱՈւՊ-ն առավել իրատեսական է, քանի որ այն պլանավորելիս հաշվի են առնվում սովորողի մասին վերջինիս տրամադրած շատ կարևոր տեղեկությունները նրա դրսևորած նախասիրությունների, հետաքրքրությունների, կարողությունների և հմտությունների վերաբերյալ: Հարկ է նշել, որ ուսուցիչը նաև հանդիսանում է տվյալ աշակերտի համար ԱՈւՊ-ը սահմանելու որոշման կայացման գլխավոր դերակատարներից մեկը: ԱՈւՊ-ի մշակման և իրականացման ընթացքում ուսուցիչը.

1. մյուս ուսուցիչներին, մանկավարժահոգեբանական աջակցության թիմի անդամներին, դպրոցի տնօրինությանը և ծնողին տեղեկություն է տրամադրում աշակերտի առաջադիմության մասին,
2. դիտարկումների միջոցով բացահայտում և մատնանշում է աշակերտի ուժեղ և թույլ կողմերը,
3. մշակում է աշակերտի՝ տվյալ առարկայի տարեկան նպատակները և ուսումնառության կարճաժամկետ նպատակադրումները,
4. պլանավորում և իրականացնում է աշակերտի՝ ԱՈւՊ-ով հարմարեցված առարկայական ծրագիրը՝ ապահովելով ուսումնառության ընթացքում անհրաժեշտ հարմարեցումները, կիրառելով երեխայի կարիքին և հնարավորություններին համապատասխան մեթոդներ և միջոցներ,
5. մշակում է աշակերտի առաջադիմության գնահատման մեթոդներն ու եղանակները,
6. գնահատում է կիսամյակային և տարեկան արդյունքները,
7. շարունակական կապ է պահպանում աշակերտի մյուս ուսուցիչների, մանկավարժահոգեբանական աջակցության խմբի անդամների և ծնողի հետ,

8. առաջարկություններ է ներկայացնում կրթության առանձնահատուկ պայմանների և հարմարեցումների վերաբերյալ՝ մյուս ուսուցիչներին, մանկավարժահոգեբանական աջակցության խմբի անդամներին, դպրոցի տնօրինությանը և ծնողին:

Անհատական ուսումնական պլանի կազմման ժամանակ պատասխան պահանջող հինգ հարցերը[12].

1. Պատմությունը
2. Երազանքներ
3. Մտավախություններ
4. Ո՞վ է
5. Կարիքներ

Խնդրո առարկայի շուրջ կարևոր է նաև բազմամասնագիտական թիմի մյուս անդամների ակտիվ մասնակցությունը: «Հանրակրթական ուսումնական հաստատության հատուկ մանկավարժը կազմակերպում և իրականացնում է կրթական հատուկ կարիքներին համապատասխան մանկավարժական աշխատանքներ և ծառայություններ՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների հետ, բացահայտում, դիտարկում հետազոտում և գնահատում է սովորողների ուսումնառության ընթացքում ի հայտ եկած մտավոր և ֆիզիկական խնդիրները, կրթության առանձնահատուկ պայմանների կարիքները[13]:

Հաջորդ կարևոր դերակատարը ուսումնական հաստատության հոգեբանն է: «Հանրակրթական ուսումնական հաստատության հոգեբանը մասնակցում է ուսուցիչների և ուսումնական հաստատության մանկավարժական մյուս աշխատողների կողմից սովորողների մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մատուցմանը՝ ապահովելով մասնագիտական շարունակական խորհրդատվություն, սովորողների անհատական առանձնահատկությունների, հակումների, նրանց ներուժի բացահայտման նպատակով իրականացնում է հոգեբանամանկավարժական ուսումնասիրություն և դիտարկում՝ ուսումնառության ամբողջ ընթացքում և տարիքային յուրաքանչյուր փուլում, մասնակցում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների անհատական ուսումնական պլանների մշակման և դրանց իրականացման գործընթացին[14]»: Բազմամասնագիտական թիմում պակաս կարևոր չէ սոցիալական մանկավարժի դերը: «Հանրակրթական ուսումնական հաստատության սոցիալական

[12] Ներառական կրթության ռազմավարություն», դասագիրք,
Երկրորդ հրատարակություն, Երևան, Ասողիկ, 2020:
[13] ՀՀ կառավարության որոշում» 14 հոկտեմբերի 2010 թվականի N 1391-Ն:
[14] ՀՀ կառավարության որոշում» 14 հոկտեմբերի 2010 թվականի N 1391-Ն:

մանկավարժըբազմամասնագիտական խմբի կազմում մասնակցում է սովորողների (այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող) անհատական ուսումնական պլանների մշակմանը, սոցիալական հարմարմանը նպատակաուղղված այլ ծրագրերի մշակման և դրանց իրագործման աշխատանքներին[15]»:

Այսպիսով՝ սա մի գործընթաց է, որի շնորհիվ տարեցտարի պակասում են հասարակությունից օտարված երեխաները: Սա գործընթաց է, որը պիտի հասարակության վերաբերմունքի փոփոխության ճանապարհ անցնի՝ ընդունելով և գնահատելով ԿԱՊԿ ունեցող սովորողներին:



[15] ՀՀ կառավարության որոշում» 14 հոկտեմբերի 2010 թվականի N 1391-Ն:

2. ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

2.1 Կրտսեր դպրոցի ուսուցիչների շրջանում ներառական կրթությանը վերաբերող իրականացված սոցիոլոգիական հարցումներ: Արդյունքների վերլուծություն և ամփոփում

Հետազոտական աշխատանքի շրջանակներում հիմնախնդրի շուրջ տվյալների հավաքագրման նպատակով իրականացրել ենք սոցիոլոգիական հարցումներ: Հարցվածները թվով 10 ուսուցիչներ են, ովքեր դասավանդում են տարրական դասարաններում: Մեր կողմից ուսուցիչների համար նախապես կազմվել են համապատասխան հարցաթերթեր՝ բաց և փակ հարցադրումներով, որոնց նպատակն է.

- Ուսումնասիրել ԿԱՊԿՈՒ սովորողների հետ տարվող մանկավարժական աշխատանքի առանձնահատկությունները, ուսումնադաստիարակչական գործընթացում առաջացրած հնարավոր դժվարությունները:
- Դիտարկել ԿԱՊԿՈՒ սովորողների հետ հանրակրթական դասարանում սովորելու պարագայում առաջացրած հնարավոր դժվարությունները աշակերտների դիտանկյունից՝ համաձայն ուսուցիչների կարծիքների:
- Դիտարկել կրտսեր դպրոցականների վերաբերմունքի առանձնահատկությունները ներառականության, ինչպես նաև նրանց պատկերացումներն ու դիրքորոշումները հատուկ կարիքներով իրենց դասընկերների վերաբերյալ՝ համաձայն ուսուցիչների կարծիքների:
- Վերլուծել ուսուցիչների կողմից բարձրացված մտահոգությունները՝ վերաբերող տարրական դպրոցում ԿԱՊԿ ունեցող սովորողների հետ տարվող մանկավարժահոգեբանական աշխատանքներն:

Հարցին, թե արդյոք ուսուցիչներն իրենց պրակտիկայում առնչություն ունեցե՞լ են ԿԱՊԿՈՒ սովորողների հետ, ստացանք ներքոբերյալ պատկերը /տե՛ս գծապատկեր 1/:



/Գծապատկեր 1/

Աշխատանքային գործընթացում ԿԱՊԿՈՒ սովորողների հետ ուսումնադաստիարակչական գործընթացի հնարավոր դժվարությունների հետ կապված հարցադրմանը ուսուցիչները հիմնականում տվել են միանման

պատասխաններ: Մասնավորապես՝ վերջիններիս կողմից առանձնացվել են ԿԱՊԿՈՒ սովորողների սոցիալականացման դժվարությունները, խոսքային խնդիրներով երեխաների շրջանում շփման ու հաղորդակցության դժվարություններն ու եզակի դեպքերում՝ դասընկերների հետ շփման դժվարությունները: Հարցին, թե ինչպե՞ս է առանձնահատուկ կարիքների առկայությունն անդրադառնում կրտսեր դպրոցականի սոցիալականացման, շփման և հաղորդակցման վրա, հարցված ուսուցիչների կարծիքները նույնպես հիմնականում համընկնում էին: Առանձնացնելով խոսքային խանգարման, տեսողական, լսողական, հենաշարժողական հիմնախնդիրները՝ ուսուցիչները մատնանշել են, որ թվարկված խնդիրներից յուրաքանչյուրն իրեն բնորոշ դժվարություններ է առաջացնում ԿԱՊԿՈՒ սովորողի ուսումնառության ընթացքում, այդուհանդերձ, յուրաքանչյուր հիմնախնդրի տրվում է համապատասխան լուծում: Այս համատեքստում հարցված ուսուցիչները կարևոր են համարել նաև ծնողների ու դասարանի մյուս սովորողների ուշադիր ու հոգատար վերաբերմունքը, որի շնորհիվ ԿԱՊԿՈՒ սովորողը հեշտությամբ հաղթահարում է հնարավոր դժվարությունները:

Այն հարցադրմանը, թե ԿԱՊԿՈՒ սովորողների առկայությունը ինչպե՞ս է անդրադառնում մյուս սովորողների ուսումնառության գործընթացի վրա, արդյոք վերջիններս չեն ունենում ուշադրության պակաս, ստացվել է հետևյալ պատկերը. հարցված ուսուցիչների 30%-ը հակված է մտածել, որ, այնուամենայնիվ, լինում են դեպքեր, երբ անհնար է մեծ ուշադրություն չդարձնել ԿԱՊԿՈՒ սովորողին, որի արդյունքում մյուս սովորողները ինչ-որ պահի ունենում են ուշադրության ու վերահսկողության պակաս, սակայն դրանք եզակի դեպքեր են և էապես չեն խանգարում ուսումնական գործընթացի բնականոն ընթացքին: Իսկ ահա 70%-ի կարծքով ուսուցչի հմտության, մեթոդամանկավարժական ժամանակակից հնարների գործադրման շնորհիվ՝ ԿԱՊԿՈՒ սովորողների ներառումը հանրակրթական դասարանում որևէ էական դժվարություն չի առաջացնում, և դասարանի մյուս սովորողները որևէ կերպ չեն տուժում: Ըստ մեծամասնության կարծիքի՝ իրականացնելով խմբային աշխատանքներ՝ հնարավոր է լինում ապահովել բոլոր սովորողների համաչափ մասնակցությունը դասին: Ուսուցիչների պնդմամբ՝ կոլեկտիվ աշխատանքի ընթացքում սովորողներն օգնում են միմյանց, նրանց մոտ ձևավորվում է կոլելտիվ աշխատանքի գիտակցումը, սովորողները ստանում են բարոյական դաստիարակության տեսանելի ու գործնական փորձառություն:*/Գծապատկեր 2 /*



/Գծապատկեր 2/

Որպեսզի պարզենք դասարանում բարոյահոգեբանական մթնոլորտը, ուսուցիչներին տրվել է հարց հետևյալ բովանդակությամբ՝ արդյոք դասարանում կա՞ համերաշխություն, սովորողները պահպանու՞մ են բարեվարքության կանոնները, բարոյական նորմերը ԿԱՊԿՈՒ սովորողների հետ շփման ժամանակ: Հարցված ուսուցիչների 90%-ը տվել է դրական, իսկ 10%-ը՝ բացասական պատասխան: */Գծապատկեր 3 /*



/Գծապատկեր 3 /

Հարցին, թե արդյոք կրթության համընդհանուր ներառումը կարո՞ղ է ի վերջո հանրության կողմից ընկալվել որպես բնականոն գործընթաց, բոլոր հարցված ուսուցիչները միաբերան տվել են դրական պատասխան: Որպեսզի պատկերացում կազմենք, թե ծնողներն ինչպես են վերաբերվում իրենց երեխաների հետ նույն հանրակրթական դասարանում սովորող ԿԱՊԿՈՒ աշակերտներին և, առհասարակ, կրթական համակարգում համընդհանուր ներառականության հիմնահարցին, ուսուցիչներին տրվել է հետևյալ բովանդակությամբ հարցը՝ արդյոք առկա են դժվարություններ ծնողական համայնքի հետ՝ կապված դասարանում ԿԱՊԿՈՒ սովորողների առկայությամբ: Հետաքրքրական է, որ այս պարագայում յուրաքանչյուր ուսուցիչ պատասխանել է հարցին՝ հենվելով կոնկրետ իր աշխատանքային պրակտիկայի վրա: Այսպես, հարցված ուսուցիչների 60%-ը տվել է բացասական, իսկ 40 %-ը դրական պատասխան: */Գծապատկեր 4 /*



/Գծապատկեր 4/

Հարցին, թե ինչ մանկավարժական պայմաններ ու մեթոդներ են գործի դնում ուսուցիչները սովորողների բարոյական դաստիարակության գործընթացում և նրանց մեջ բարձր մարդկայի որակներ սերմանելու համար, պատասխաններն այսպիսին էին. հարցված ուսուցիչները մատնանշել են ներդպրոցական և արտադպրոցական բազմաթիվ միջոցներ ու եղանակներ՝ սովորողների բարոյական դաստիարակությունն արդյունավետ իրականացնելու նկատառումներից ելնելով: Նշվել է մասնավորապես զրույցի, խմբային քննարկման, գրական ընթերցումների, ճանաչողական և ուսուցանող ֆիլմերի կարևոր դերը, նաև արտադպրոցական գործունեության առաջատար ձևերի՝ /սպորտային միջոցառումներ, հետազոտական աշխատանքներ, զանգվածային գրական, երաժշտական, թատերական խմբակներ, մանկական ստեղծագործությունների ցուցահանդեսներ, էքսկուրսիաներ, տարբեր տեսակի դպրոցական մրցույթները, օլիմպիադաներ/ օգնությամբ սովորողների բարոյական դաստիարակությունն իրացնելու հնարավորությունները:

Պարզելու համար, թե հանրակրթական դասարանում ԿԱՊԿՈՒ սովորողները ինչպե՞ս են ինքնադրսևորվում, վերաբերվում իրենց «խնդրին», արդյոք նրանք ունեն բարդույթներ, դա խանգարու՞մ է վերջիններիս բնականոն կենսագործունեությանը, ուսուցիչների պատասխաններն ունեին հետևյալ տեսքը: Հարցվածների 70%-ը հակված է մտածել, որ մանկավարժական կառուցողական աշխատանքի, դպրոցի բազմամասնագիտական թիմի արդյունավետ աշխատանքի, դասընկերների բարիդրացիական վերաբերմունքի առկայության պարագայում ԿԱՊԿՈՒ սովորողները չեն կաշկանդվում, սոցիալականացման խնդիրները հաղթահարում են բավականին հեշտ:

30%-ի խորը համոզմամբ՝ ԿԱՊԿՈՒ սովորողները, ունենում են բարդույթներ, շփումների մեջ հիմնականում պասիվ են, ունեն ինքնադրսևորման և ինքնաարտահայտման դժվարություններ: */Գծապատկեր 5/*



/Գծապատկեր 5/

Որպեսզի պարզենք սովորողների միջև միջանձնային հարաբերությունների բնույթը, հնարավոր կոնֆլիկտների ու անհարմարությունների առկայության դեպքերը, ուսուցիչներին տրվել է հետևյալ հարցը՝ արդյոք նկատել եք բացասական վերաբերմունքի կտրուկ դրսևորումներ ԿԱՊԿՈՒ սովորողների նկատմամբ, եթե այո, ապա մանրամասնե՛ք դրանց բնույթը: Ուսուցիչների հիմնական մասը, հենվելով իրենց մանկավարժական պրակտիկայի վրա, չմտաբերեցին նմանօրինակ դեպքեր, երբ ԿԱՊԿՈՒ սովորողնի պատիվն ու արժանապատվությունը, կրթության իրավունքը ոտնահարվել է կամ վերջինիս նկատմամբ գործադրվել է ֆիզիկական կամ հոգեբանական բռնություն: Սա, թերևս, խոսում է այն մասին, որ կրտսեր դպրոցականների հետ տարվող դաստիարակչական գործընթացները բավականին արդյունավետ են, քանի որ նրանք բարեկամաբար են վերաբերվում մեկը կյուսին, այդ թվում՝ ԿԱՊԿՈՒ համադասարանցիներին:

Այսպիսով, կարելի է պնդել, որ մեծամասամբ խտրական վերաբերմունք տարրական դպրոցի ԿԱՊԿՈՒ սովորողների նկատմամբ չի դրսևորվում: Այդուհանդերձ, խնդրահարույց կամ կասկածելի դեպքերին ուսուցչի, հատուկ մանկավարժի կողմից տրվում է հրատապ արձագանք: Մեր սոցիոլոգիական հարցման հարցաշարի եզրափակիչ հարցը հետևյալն է՝ ո՞րն է հիմնախնդրի շուրջ Ձեր առաջարկությունը: Նշենք, որ մի շարք ուսուցիչներ ուղղակիորեն որևէ առաջարկությամբ հանդես չէին եկել, մյուս մասն էլ բավականին սեղմ էր արտահայտվել: Ըստ էության՝ ուսուցիչների կողմից առաջարկվում է առավել շատ իրականացնել իրազեկող դասեր թե՛ ծնողների, թե՛ սովորողների շրջանում՝ առանձնահատուկ կարիքներով անձանց մասին: Սա հիմնավորվում էր այնպես, որ իրազեկումը թույլ կտա հասարակության տարբեր շերտերին առավել մոտիկից ճանաչել հատուկ կարիքներով անձանց հիմնախնդիրները, նրանց դժվարություններն ու առանձնահատկությունները, ինչն էլ կարող է խթանել հնարավոր բացասական վերաբերմունքի չեզոքացմանը:

Այսպիսով, հարկ է նկատել, որ հիմնախնդրի շուրջ հարցվածների պատասխանները չունեին էական տարբերություններ, որոշ դեպքերում միայն առկա էին հակադարձ կարծիքներ ու պնդումներ: Արձանագրվեց, որ հիմնախնդիրն իրականում բավականին զգայուն է և ունի տեղային դրսևորումներ, այդուհանդերձ հարցվող ուսուցիչները կարևոր էին համարում համընդհանուր ներառական կրթության գաղափարը և քաջ գիտակցում էին այդ ճանապարհին հանդիպող հնարավոր ռիսկորի առկայությունը: Ուսուցիչների կողմից կարևորվեց կրտսեր դպրոցականների դաստիարակության գործընթացի բարձր արդյունավետության ապահովումը մանկավարժահոգեբանական և կրթադաստիարակչական միջոցների գործադրմամբ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ կրտսեր դպրոցը երեխայի կյանքի բավականին պատասխանատու շրջափուլ է, հետևաբար՝ դաստիարկությունը պետք է արդյունավետ կերպով կազմակերպել՝ առավելագույնի հասցնելու համար կրտսեր դպրոցականի ճանաչողական զարգացումը, կարողությունները, հմտությունները, բարձր բարոյական ու մարդասիրական արժեքների ձևավորումը: Այս ամենից զատ՝ այս տարիքում տեղի է ունենում երեխայի սոցիալական փորձի ակտիվ զարգացումը, սոցիալական հմտությունների ձեռքբերումը և հասարակության մեջ կյանքի համար անհրաժեշտ որակները, ուստի լավ ու հոգատար վերաբերմունքը այդ թվում ԿԱՊԿՈՒ դասընկերների նկատմաբ: Ուսուցիչները, փորձելով առանձնացնել ներառական կրթության դրական և բացասական կողմերը, մեծամասնությամբ դրական համարեցին ԿԱՊԿՈՒ աշակերտների սոցիալականացման ընթացքնում շփման հաստատումը, իսկ բացասական կողմ համարվեց ժամանակի սղությունը, դասապրոցեսի հնարավոր խանգարումն ու ընդհատումը, ուշադրության և ժամանակի ճիշտ բաշխումը: Ուսուցիչները փքստեցին, որ արդյունավետ համագործակցության պարագայում հնարավոր է հասնել արդյունքերի:

Թեև ներառական կրթության նկատմամբ վերաբերմունքը և մոտեցումները ենթարկվել են որոշակի փոփոխությունների, սակայն համակարգը մերժող ուսուցիչների թիվը ևս փոքր չէ: Այսպիսի տրամադրվածությունը իր հետևանքները կարող է ունենալ ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ աշխատանքի արդյունավետության տեսանկյունից: Ուստի կա շարունակական աշխատանքի և վերապատրաստումների անհրաժեշտություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հաշվի առնելով հետազոտական աշխատանքում մեր կողմից կատարված պնդումները, սոցիոլոգիական հարցման արդյունքները՝ հանդես գանք մի շարք արձանագրումներով: Անցումը համընդհանուր ներառականության պահանջում է շատ ավելի լուրջ նախապատրաստական աշխատանքներ: Ուստի բազմամասնագիտական թիմը պետք է աշխատի նպատակային ու կառուցողական: Ուսուցիչը չպետք է դասի ժամանակ կենտրոնանա բացառապես այն աշակերտների վրա, ում սովորելու տեմպերը համապատասխանում են ուսումնական ծրագրի տեմպին: Այն աշակերտները, ում սովորելու տեմպը ավելի դանդաղ է, նույնպես պետք է հավասարապես մասնակցեն ուսումնական գործընթացին: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈՒ) երեխաները որևէ կերպ չպետք է ստվերվեն դասին: Միևնույն ժամանակ՝ անհատական ուսումնական պլանը պետք է մանրակրկիտ մշակվի ու պլանավորվի, այն չպետք է լրացնել որպես պահանջ, այլև դրան պետք է մոտենալ՝ որպես ուսուցչին, աջակցության թիմին և ծնողներին համախմբող գործիքի:

ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ աշխատանքում առկա հիմնական բարդությունները և խնդիրները ընդհանրացնելով՝ կարող ենք ասել, որ անհատական խնդիրների հետ մեկտեղ ուսուցիչների մեծամասնությունը առանձնացնում է կենտրոնացումը, պասիվությունը, մյուս աշակերտների ուշադրության շեղումը որպես հաճախ հանդիպող և դասապրոցեսի արդյունավետության վրա ազդող գործոններ: Կարևոր է նաև դասարանի բոլոր ծնողների բարձր գիտակցումն ու պատասխանատու մոտեցումը հարցին: Կարելի է հաճախակի ճանաչողական դասընթացներ կազմակերպել աշակերտների ծնողների համար՝ նրանց տեղեկացվածությունը բարձրացնելու նպատակով: Սա կօգնի ծնողներին համակողմանիորեն տիրապետել հատուկ կարիքներով երեխաներին խնդրներին և նպաստել կրթական պրոցեսին: Սխալված չենք լինի, եթե պնդենք, որ ուսուցչի գերխնդիրն այս պարագայում պետք է լինի դասարանում բարոյահոգեբանական կայուն մթնոլորտի ապահովումը, ուստի կարելի է հաճախակի կազմակերպել էքսկուրսիաներ, արտադասարանական միջոցառումներ, որտեղ աշակերտները հնարավորություն կունենան միմյանց հետ անկաշկանդ շփվելու, առավել մոտիկից ծանոթանալու: Այս կերպ նրանք կճանաչեն ու կընդունեն ԿԱՊԿՈՒ դասընկերոջը նաև ուսումնական գործընթացից դուրս, գուցե և գտնեն ընդհանուր հետաքրքրություններ, ինչն էլ կարող է մտերմացնել նրանց:Կարևոր ենք համարում նաև ծնողների կառուցողական աշխատանքը իրենց երեխաների հետ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Կրթության մասին» ՀՀ օրենք:
2. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք:
3. https://www.arlis.am/documentview.aspx?docid=94683 «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք:
4. ՀՀ կառավարության որոշում» 14 հոկտեմբերի 2010 թվականի N 1391-Ն:
5. «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ՀՀ օրենք:
6. «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիա:
7. Ներառական կրթության ռազմավարություն», դասագիրք,

Երկրորդ հրատարակություն, Երևան, Ասողիկ, 2020:

Բաց Ֆայլ Ներառական կրթության մասին. Օժանդակ նյութեր մենեջերների և ադմինիստրատորների համար, ՅՈՒՆԵՍԿՕ-2004:

ՀԱՎԵԼՎԱԾ

Հարցաթերթիկ՝ տարրական դպրոցում դասավանդող ուսուցիչների համար

1. Ձեր աշխատանքային պրակտիկայում առնչություն ունեցե՞լ եք ԿԱՊԿՈՒ սովորողների հետ:

   Այո ☐ Ոչ ☐

2. Ի՞նչ դժվարություններ կմատնանշեք ԿԱՊԿՈՒ աշակերտների կրթադաստիարակչական գործընթացի իրականացման ժամանակ:

---

3. Ինչպե՞ս է առանձնահատուկ կարիքների առկայությունն անդրադառնում կրտսեր դպրոցականի սոցիալականացման, շփման և հաղորդակցման վրա:

---

4. ԿԱՊԿՈՒ սովորողների առկայությունը ինչպե՞ս է անդրադառնում մյուս սովորողների ուսումնառության գործընթացի վրա, արդյոք վերջիններս չեն ունենում ուշադրության պակաս:

---

5. Արդյոք դասարանում կա համերաշխություն, սովորողները պահպանում են բարեվարքության կանոնները, բարոյական նորմերը ԿԱՊԿՈՒ սովորողների հետ շփման ժամանակ:

Այո ☐ Ոչ ☐

6. Ձեր կարծիքով կրթության համընդհանուր ներառումը կարո՞ղ է ի վերջո հանրության կողմից ընկալվել որպես բնականոն գործընթաց:

   Այո ☐ Ոչ ☐

7. Արդյոք առկա՞ են դժվարություններ ծնողական համայնքի հետ՝ կապված դասարանում ԿԱՊԿՈՒ սովորողների առկայությամբ:

Այո ☐ Ոչ ☐

8. Ի՞նչ մանկավարժական պայմաններ եք գործի դնում սովորողների բարոյական դաստիարակության և նրանց մեջ բարձր մարդկայի որակներ սերմանելու տեսանկյունից:

---

9. ԿԱՊԿՈՒ սովորողները ինչպե՞ս են վերաբերվում իրենց խնդրին, արդյոք դա խանգարում է վերջիններիս բնականոն կենսագործունեությանը:

---

10. Արդյոք նկատել եք բացասական վերաբերմունքի կտրուկ դրսևորումներ ԿԱՊԿՈՒ սովորողների նկատմամբ, եթե այո, ապա մանրամասնե՛ք դրանց բնույթը:

---

11. Արդյոք հանրակրթական դասարանի սովորողները հոգատար են իրենց ԿԱՊԿՈՒ դասընկերների նկատմամբ, եթե այո, ապա մանրամասնեք:

---

12. Արդյոք Ձեր ԿԱՊԿՈՒ աշակերտներն իրենք ունեն բարիդրացիական վերաբերմունք մյուս սովորողների նկատմամբ:

Այո ☐ Ոչ ☐

13. Ի՞նչ մանկավարժական խնդիրների եք բախվում սովորողների բարոյական դաստիարակության գործընթացում:

---

14. ԿԱՊԿՈՒ սովորողները, ըստ Ձեր մասնագիտական կարծիքի, ինչպիսի՞ դժվարություններ ունեն հանրակրթական դասարանում:

---

15. Ո՞րն է հիմնախնդրի շուրջ Ձեր առաջարկությունը: